

ըսելով թէ ինչպէս ժողովուրդը կը շարունակէր «արեւելեան ծանձրացումները» ուխտավայրերը (Ներք. 141):

Գ. Մեղկութիւնն ու փափկութիւնը կը խանգարեն հայ տիկնանց բարքերն ալ: Արդէն իրենց աղջկութենէն մինչեւ հարսնութիւն փակուած իրենց սենեկին մէջ (Փրպ. 161-2), այնուհետեւ կը շարունակեն եւ աւելի փոյթ կը տանին «զրգեալք եւ գգուեալք» մնալու իրենց ճոխ ապարանից ու կերպասեայ սրահակաց մէջ (անդ. Յհ. կթղ. 286), եւ կը ննջեն «փետրալից հեշտոցաց եւ ոսկեթել զահոյից» վրայ (Որբ. 140): Անոնց փափուկ մատները կը զգուշանան նոյն իսկ առտնին ծառայութիւններէ, եւ նաժիշտները կը յարգարեն իրենց անկողինն անգամ (Եղիշ. 173): Անոնց պճնասիրութիւնն զգեստուց մէջ՝ շատ վեր է մեր ծանօթութենէն, եւ որուն պիտի վերադառնամ ուրիշ առթիւ: Մեր տեսանք արդէն անոնց հոգածութիւնը բուրաստանաց, այգիներու, փափկակերութեան, խնձոյից եւ ասոնց մէջ ցուցած պշրանաց (աստ, 129, 21, 112, 148-9):

Եթէ այդ հեշտակեցութեան ծոցէն կըրնային ծլիլ Աշխենի, Խոսրովի դիտոյ, Շուշանկան, Կատրանիդեայ եւ իրենց նմա-